

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4

Կորոնավիրուսի վարակի տարածման, կանխարգելման և արձագանքման մարզային

շտաբի նիստի

02.04. 2020թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին

Գ.Մարկոսյան -մարզպետի տեղակալ
Ա.Մխիթարյան -մարզպետարանի գլխավոր քարտուղար
Հ.Պապոյանը, Լ.Վարդանյանը, Ա.Ջանազյանը, Ժ.Ղազարյանը, Ռ.Հարությունյանը, Ա.Սահակյանը,
Վ.Հովհաննիսյանը, Ա.Հովհաննիսյանը, ՀՀ ազգային անվտանգության և ոստիկանության
ծառայությունների մարզային վարչությունների պետերի տեղակալները:

Օրակարգում՝

1. Ներկա վիճակի ներկայացում:

/զեկ.՝ Ա.Հովհաննիսյան/

2. Առկա խնդիրների քննարկում:

Ք ն ն ա ր կ վ ե ց.

- Վանաձորի ինֆեկցիոն հիվանդանոցի աշխատակիցների կացության խնդիրը լուծելու հարցը:
- Ռուսաստանի դաշնությունից Տաշիր քաղաք տեղափոխվող մահացած քաղաքացու հողարկավորության հետ կապված խնդիրը:
- Բանկերի մոտ մարդկանց կուտակումների խնդիրը:

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց.

1. ՀՀ Լոռու մարզպետարանի գլխավոր քարտուղար Ա.Մխիթարյանին և մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի պարտականությունները կատարող Լ.Վարդանյանին՝

Ներկայացնել Վանաձորի ինֆեկցիոն հիվանդանոցի բուժաշխատողների գիշերային կացության խնդիրը լուծելու տարբերակները:

2. ՀՀ Լոռու մարզային ոստիկանության վարչության պետ Տ.Կարապետյանին՝

Մարզի վարչական սահմաններում գործող անցակետերում աշխատանքներ տանել անձանց այլ մարզեր և հանրապետության մարզերից Լոռու մարզ անհարկի ուղևորությունները կանխելու ուղղությամբ: Հետևողական աշխատանք տանել մարդկանց կուտակումները՝ հատկապես բանկոմատների մոտ, կանխելու ուղղությամբ:

02/04/20

X 

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆ